

«Ես իրապես ազատ եմ դառնում միայն շնորհիվ այլոց ազատության, այնպես որ, որքան մեծ է ինձ շրջապատող ազատ մարդկանց թիվը, որքան խոր ու լայն է նրանց ազատությունը, այնքան տարածված, խոր ու լայն է դառնում իմ ազատությունը...»<sup>1</sup>:

Միխայիլ Բակունին

## ԵՐԵՎԱՆԻ ԿՈՂՊԵՔՆԵՐՆ ՈՒ ԲԱՆԱԼԻՆԵՐԸ\*

Ավելի քան երկու տասնամյակի պատմություն ունեցող Հայաստանի երրորդ Հանրապետության ճակատագիրն այնպես է դասավորվել, որ մեր ազգի ու պետության հետագա ընթացքը պայմանավորող քաղաքական, տնտեսական և մշակութային-քաղաքակրթական լուծումների բոլոր հնարավորություններն այսօր հատվում են մեկ կետում՝ մայրաքաղաք **Երևանում**:

Լամվ է դա, թե՛ վատ՝ բոլորովին այլ հարց է, որովհետև գործ ունենք մի անհերքելի իրողության հետ, որին Հայաստանի ու հայության կյանքում երկակի դեր է վերապահված. Երևանը մի կողմից՝ յուրօրինակ **կողպեք** է, որը փակում է ազգի քաղաքական ներուժը, տնտեսական հնարավորությունները և հոգեմտավոր հարստությունը հայրենիքում կենտրոնացնելու ուղիները, իսկ մյուս կողմից՝ մեր ապագայի դռները բացելու այն խորհրդավոր **բանալին** է, որի գաղտնիքը պետք է բացահայտենք ազգովին:

Երևանը մի յուրատեսակ «մանրակերտ» է, որի վրա ներկայումս առարկայորեն պատկերված են անցյալի **վերապրուկների** տեսքով հանդես եկող մեր ձեռքբերովի հիվանդություններն ու արատները և դրանցից ծնված նոր հիմնախնդիրները: Երևանում են կենտրոնացած նաև նախորդ սերունդներից ժառանգված այն չլուծված հիմնախնդիրները, որոնք գրեթե ամեն պահի իրենց հայելային արտացոլումն են գտնում Հայաստանի ու հայության կյանքում խոչընդոտելով մեր դժվարին ընթացքը: Եվ արդի հայ քաղաքական մտքի մեծագույն բացը հենց այն է, որ մինչ օրս պահպանել է «համայն հայության մայրաքաղաքի» մասին իր կիսաառումանտիկ պատկերացումները, որովհետև քանի դեռ Երևանը չենք ճանաչում ներսից, երբևէ չենք կարող փայփայել Հայաստանի կացության բանական կարգաբերման հույսը:

Անշուշտ, վերջին շրջանում մեզանում նույնպես հրապարակվում են «երևանագիտական» առանձին ուշագրավ ուսումնասիրություններ<sup>2</sup>: Եվ եթե դրանց

\*Ընդունվել է տպագրության 10.6.2013:

1 Бакунин Михаил Александрович: Собрание сочинений. Lib.ru/Классика. [http://az.lib.ru/b/bakunin\\_m\\_a/](http://az.lib.ru/b/bakunin_m_a/)

2 Տե՛ս օրինակ՝ Ա. Ա. Степанян, Т.С. Симян, Ереван как семиотический текст (опыт реконструкции начала и конца проспекта Маштоца).-Критика и семиотика, вып. 16, 2012 г., с. 6-16.

Ե (ՃԵ) քաղթ, թիվ 2 (42) ապրիլ-հունիս, 2013  
ՎԽՄ համահայկական հանդես

չրկնելու համար փորձենք մեկ բառ-բնորոշումով սահմանել, թե տիպաբանական առումով աշխարհի քաղաքների դիրքը ինչպես է պատկանում Երևանը, անմիջապես կարձանագրենք, որ նրանում առկա են ինչպես փառավոր անցյալ ունեցող ազգերին բնորոշ՝ նվիրական հիշողության խորհրդանիշերը, այնպես էլ արևմտյան մեգապոլիսի արդիական ու հետարդիական գծերը: Բայց երբ տարվենք նման «շքեղ սիմբիոզի» խաբուսիկ հմայքով և փորձենք «քաղաքակրթական հիմնավորում» տալ մեր մեկնաբանությանը, ապա «բարձր նյութի» միջոցով կարող ենք սքողել ուսումնասիրության առարկայի խորքային էությունը: Երևանի «տիպաբանական անձնագիրը» թաքնված է ոչ թե արդիական արտաքին տեսքի կամ «հագուստի», այլ նրանում բնակվող մարդկանց՝ **երևանցիների** մեծամասնության հոգեկերտվածքի խորքային գծերի մեջ: Դրանց ավանդական ու մանավանդ՝ ձեռքբերովի շերտի ուսումնասիրությունը հստակորեն ապացուցում է, որ Երևանն այսօր էլ իր էությամբ **արևելյան քաղաք** է՝ առանց Արևելքին բնորոշ արտաքին ատրիբուտների: Այս բնորոշման առանցքային բառ-եզրույթով՝ «Արևելք» հասկացությամբ, արձանագրում ենք մեր «մայրաքաղաքային հասարակության» հոգեկերտվածքում մինչխորհրդային և խորհրդային Երևանին բնորոշ արժեքների պահպանումը:

Պատճառն ակնհայտ է. Երևանը **շենքերը** չեն, որոնց թամանյանական նախագծի ողջ համալիրը խորհրդանշում է մեր ազգի անցած փառավոր ուղու համար թերևս ամենատիպական՝ **անիական վերհուշը**, և ոչ էլ վերջին տասնամյակներում դրանք հիմնավորապես աղձատած՝ արևմտյան մեգապոլիսին բնորոշ բարձրահարկերը, այլ մարդիկ՝ **երևանցիները**, որոնց 80-90 տոկոսը իրենց մշակույթով այսօր էլ **արևելքցիներ** են՝ այդ բառի ամենաիսկական իմաստով:

Նման իրողությունը հայ ժողովրդի ողբերգական ճակատագրի անմիջական հետևանքն է, որովհետև Նոր ժամանակներում եվրոպական քաղաքակրթության հենքի վրա հայությունն արդիականացել է 19-րդ դարի Հայոց մշակութային մայրաքաղաքներում՝ Կ. Պոլսում ու Թիֆլիսում: Իսկ պարսիկ խաներից ու նրանց փոխարինած ռուս նահանգապետերից մնացած գավառական քաղաք Երևանը մայրաքաղաք է դարձել միայն Հայաստանի առաջին Հանրապետության օրոք, երբ ապաստան է տվել հարյուր հազարավոր արևմտահայ ու արևելահայ գաղթականների: Խորհրդային շրջանում մեր մայրաքաղաքում ծավալված ինտենսիվ շինարարությունն ընթացել է 1940-ականների երկրորդ կեսից սկիզբ առած՝ բնակչության աննախադեպ ներհոսքի պայմաններում:

Ուստի Երևանը դարձել է հայությանը բաժին ընկած հետեղեռնյան իրողությունների մանրակերտը, որի բնակիչների կարևոր, անգամ հիմնատարային մասը ժամանակի ընթացքում կազմել են հայտնի սրամտությամբ «բնիկ երևանցի» որակված՝ «վանեցի-մշեցիների» անմիջական ժառանգները: Իսկ 1990-ականներից մայրաքաղաքում սկսել է մեծանալ տիպիկ գյուղաբնակների՝ «ապարանցի-ախալքալաքցիների» թիվը: Գաղթի ու ներգաղթի այս գործընթացների հետևանքով ժամանակակից Երևանը ձևավորվել է որպես կտրտված թաղերի կամ՝ «**մայլաների**» բաժանված մի «**մեծ գյուղ**» և մեծ մասամբ այդպիսին է մնացել մինչ օրս: Չունենալով իր հիմքի վրա զարգացած քաղաքային կյանքի կայուն ավանդույթներ՝ այդ «մեծ գյուղը» 1980-1990-ականների «լուս-անջելեյան արտագաղթի» արդյունքում կորցրել է անգամ նախկին գավառական քաղաքի համեստ մշակութային ենթաշերտը:

Ավելին՝ հիմնականում դրսեկ մտավորականության ջանքերով հիմնված հայոց մտքի ու ոգու **տաճարների** (Մատենադարան, Գիտությունների ակադեմիա, Պետհամալսարան, Գրողների միություն և այլն) ազդեցությունը նույնպես խորքային տեղաշարժեր չի առաջացրել երևանցիների ճնշող մեծամասնության հոգեկերտվածքում: Արդյունքում՝ համաերևանյան ընդհանրության գիտակցման փոխարեն ձևավորվել ու կարծրացել է 1940–1950–ականների թաղային կոիվների ավանդույթի միֆականացման վրա հիմնված թաղային «հայրենասիրությունը»: Նման մտածելակերպը ժամանակին հունավորվել է նաև Երևանում **գողականների**<sup>33</sup> ինստիտուտի ներդրման, ինչպես նաև արևմտյան մշակույթի կրողը դարձած նորահաս երիտասարդությանը՝ **«հիպիներին»** սանձելու նպատակով՝ կեղծ-ժողովրդական մշակույթի՝ **«ռաբիսի»**<sup>4</sup> քարոզով:

Այդ պատճառով՝ չնայած արդիական շենքերի ու պողոտաների կառուցմանը և համապետական ու համազգային նշանակություն ձեռք բերած մշակութային օջախների՝ տաճարների ցանցի ձևավորմանը, **«միջին երևանցին»** իր ճնշող մեծամասնությամբ ոչ միայն պահպանել է ավանդական-թաղային կենսակերպը, այլև ժամանակի ընթացքում խրվել է նրա նոր՝ խորհրդային դրսևորումները դարձած գողականության ու «ռաբիսի» մեջ:

Ուրեմն 1991–ին վերանկախացած Հայաստանը ձեռք է բերել մի մայրաքաղաք, որի բնակչության ճնշող մեծամասնությունը սկզբունքորեն տարբերվում է նոր ու նորագույն ժամանակների եվրոպական մայրաքաղաքների **քաղաքացիներից**: Մինչդեռ, պատմությունից հայտնի է, որ ուղղակի անհնար էր պատկերացնել ազգերին դեպի առաջադիմության բարձունքներն առաջնորդած Ֆրանսիական Մեծ հեղափոխությունը առանց փարիզեցիների և նույնատիպ

3 Գողականությունը Ռուսաստանում պատմական խոր արմատներ ունի, իսկ «օրենքով գողերի» ինստիտուտը ձևավորվել է 1930–ականների ստալինյան բռնաճնշումների շրջանում: Այն պետության կողմից «կարգաբերվել է» հանցաշխարհի վրա վերահսկողություն հաստատելու նպատակով: ԽՍՀՄ գոյության վերջին տասնամյակներին տեղի է ունեցել «օրենքով գողերի» ինստիտուտի սերտաճումը սովետային տնտեսության՝ «ցեխավիկության» հետ: Առաջինին բնորոշ «պատվո կողերսի» վերանայման սկիզբը դրվել է 1979 թվականին՝ Հյուսիսային Կովկասի Կիսլովոդսկ քաղաքում կայացած «օրենքով գողերի» և սովետային գործարարների («ցեխավիկների») հավաքի («ստոդկայի») ժամանակ: Համաձայն նրա ընդունած «պատմական որոշման»՝ պաշտպանություն կամ «տանիք» ապահովելու դիմաց «ցեխավիկները» պարտավոր էին սեփական եկամուտների 10 տոկոսը հատկացնել «օրենքով գողերին»: Սա գողականության տնտեսական գործառույթների «օրինականացման» առաջին քայլն էր, որն իր «արձագանքները» գտավ նաև Խորհրդային Հայաստանում: Ու թեև մեր երկրի վերանկախացման արդյունքում Հայաստանում գողականությունը զգալիորեն սահմանափակվեց, սակայն 2000–ական թվականներին այն նորից դուրս եկավ սովետից արդեն՝ իշխանության բարձրի ու գործելակերպի տեսքով: Վերջինս, իր «մականունավորների» միջոցով ընդօրինակելով գողականության «լավագույն ավանդույթները», ժամանակի ընթացքում ձևավորեց նաև իր «տեսակային հենարանը»՝ ի դեմս ընտրական գործընթացներում ձեռքերի լիակատար ազատություն ստացած փողոցային խուժանի:

Հետահայացի միջոցով քննելով ԽՍՀՄ «օրենքով գողերի» և սովետային գործարարների 1979 թ. Կիսլովոդսկի հավաքի «պատմական որոշման» կիրառման ընթացքը՝ դժվար չէ եզրակացնել, որ 21–րդ դարում անկախ Հայաստանում հաստատվել է «տանիքների» ու «նայտցների» («հարկերի») վրա հիմնված հենց այդ նույն համակարգը: Նրա միջոցով «փայլուն հաղթանակներ» արձանագրող իշխող կուսակցության ղեկավար կազմի վերջին հավաքներն էլ սկսել են ընդօրինակել սննդի օբյեկտներում հրավիրվող հավաք-«ստոդկաների» միջոցով «հարցեր լուծող» գողականների «մշակույթը»:

4 Հիպիների, ռաբիսի կամ ինչպես Երևանում են բնորոշում՝ **ռաբիզի** և տիպիկ երևանյան առօրեականության այլ դրսևորումների վերլուծությունը տես Աղասի Թադևոսյան, Երևանի քաղաքային մշակույթը, «ՎԷՄ» 2010, N 4, էջ 112–131, 2011, N 1 էջ 78–97:

խնդիրների լուծման գործում սեփական երկրների ճակատագրում վճռորոշ դեր խաղացած լոնդոնցիների, բեռլինցիների և այլոց:

Պատմական ավելի լայն կտավի վրա մեկնաբանելով եվրոպական ազգերի ճակատագրում խոշոր քաղաքների և քաղաքաբնակների՝ **բուրգերների** խաղացած վճռորոշ դերը՝ **Մաքս Վեբերը** այսպես է բնութագրել նման երևույթի պատճառները. «Ռացիոնալ բարոյականության և ներաշխարհի բարոյականության ակունքները կապված են Արևմուտքում մտածողների ու մարգարեների հայտնվելու հետ..., որոնք զարգացել են ասիական մշակույթներին խորթ՝ առանձնահատուկ հասարակական միջավայրերում: Այդ միջավայրերն են եղել քաղաքային **բուրժուական ստատուս-խմբի** կողմից ծնունդ տրված հիմնախնդիրները, առանց որոնց ո՛չ **հուդայականությունը**, ո՛չ **քրիստոնեությունը** և ո՛չ էլ **հելլենիստական** մտքի զարգացումն անհնարին կլինեին»<sup>5</sup>:

Ասվածից հետևում է, որ խորհրդային Երևանում հիմնված հայոց մտքի և ոգու տաճարների համակարգը բավարար չէր անկախ Հայաստանում ռացիոնալ բարոյականության նորմերի հաղթանակի համար, քանի դեռ նրա մայրաքաղաքն իր ներսում չէր պարունակում քաղաքաբնակների այն ստատուս-խումբը և նրան բնորոշ հիմնախնդիրները, որոնց հիմքի վրա ծնունդ է առնում հանրային կյանքի բանական կարգաբեղման պահանջմունքը: Ավելին՝ Հայաստանի վերանկախացման շրջանում՝ 1990-ական թվականներին, նոր տնտեսահարաբերությունների արմատավորման պատմական առաքելությունն ունեցող բուրժուական ստատուս-խմբի ձևավորումը մեզանում ընթացել է պետականորեն հրահրված հանրային հարստության թալանի ու մենաշնորհայնացման միջոցով: Դրա հետևանքով այդ ստատուս-խումբն ի սկզբանե սերտաձել է իրեն հարստության տեր դարձրած պետական **հիննոր** ապարատի հետ: Նորանկախ երկրները տնտեսապես օկուպացրած նման գիշատիչ ստատուս-խմբերի բազմաթիվ տարատեսակներ են հայտնի **նոր գաղութատիրության** պատմությունից, որոնք, ստրկական վիճակում պահելով իբր թե անկախացած ժողովուրդներին, տասնամյակներ շարունակ կասեցրել են նրանց զարգացումը:

Երևանում նման գործընթացների ծավալման ենթահողը խիստ բարենպաստ էր Ղարաբաղյան պատերազմի հաղթանակները «սեփականաշնորհած» ռազմաբյուրոկրատական վերնախավի առկայության և թաղային միջավայրի խորապես ասիական մշակույթի ազդեցության պատճառով: Ուստի՝ 2000-ականներին վերջնականապես ձևավորված այս քաղաքական, տնտեսական ու քրեական «եռամիասնությունը» որոշ ներքին բախումներից հետո արագորեն հարթեց իր ներսում առաջ եկած տարաձայնությունները՝ չհանդիպելով շատ թե քիչ շոշափելի դիմադրության<sup>6</sup>:

5 Ավելի մանրամասն տե՛ս Bendix Reinhard. – Max Weber: An Intellectual Portrait. — University of California Press. — P.79. — ISBN 0-520-03194-6

6 Օրինակ՝ երբ ազգի հաղթանակները «սեփականաշնորհած» դարաբաղյան «վիկինգների» ամենատիպական ներկայացուցիչը բուրժուական ստատուս-խմբի ու թաղային միջավայրի դիմադրությունը կտրտելու համար առաջ քաշեց Երևանում իրենից բացի այլ «տղամարդկանց» բացակայության մասին թեզը, վերջիններս լրջորեն չարձագանքեցին նման մարտահրավերին: Որովհետև մայրաքաղաքային կեղծ ստատուս-խումբն իր սեփականության պահպանման խնդիրն ուներ, իսկ թաղային միջավայրում առկա էր ոչ թե համաերևանյան, այլ տոկ թաղային «պատվո կողերսը»: Ըստ դրա՝ Երևանում «տղամարդիկ» տեսակավորվում էին **Կոնդին** կամ **Երրորդ մասին** պատկանելությանը համապատասխան, իսկ համաերևանյան պատվախնդրությունը («թասիբը») ինչ-որ առումով վերացական կատեգորիա էր:

Այս երևույթը մեզանում ունի շատ ավելի խոր՝ սոցիալ-պատմական արմատներ, քանի որ 20-րդ դարում Երևանի ձեռք բերած եվրոպական տեսքի խորքում հաստատված «միջին երևանցին», իր ճնշող մեծամասնությամբ սերելով թուրքական բռնապետությունից, խորհրդային ամբողջատիրությանն իբրև «ամանաթ» փոխանցված երեկվա **ռայաներից**, անաղարտ կերպով պահպանել է հայի հարմարվող տեսակի համար տիպական՝ պետությանն ու գործընկերոջը խաբել-«քցելու» սովորույթը: Եղեռնի, գաղթի ու սովի տարիներին դրան գումարվել են ծայրահեղ եսասիրության և շրջապատի հանդեպ համընդհանուր նեղացածության՝ «**մուննաթի**» տեսքով հանդես եկող սոցիալական ագրեսիայի դրսևորումները:

Պատճառն այն է, որ ի տարբերություն հետեղեռնյան շրջանում՝ ազատ միջավայրերում արագորեն կերպարանափոխված ավանդական Սփյուռքի ներկայացուցիչների, «միջին երևանցու» նախնիները 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի առաջին տասնամյակներին **սուլթանների** ձիրաններից ազատվելով և անմիջապես հայտնվելով **ստալինների** ու նրանց կամակատարների ձեռքերում, այդպես էլ չեն հաղթահարել իրենց **ձեռքբերովի արատները**: Երևանում հայոց ազգային արժանապատվությունը վերականգնվել է միայն 1965-ից սկիզբ առած ազգային վերագարթոնքի հետևանքով<sup>7</sup>, որն էլ առավելապես ուղղորդվել է ոչ թե ազատ մարդու և ազատ քաղաքացու, այլ իրավագրկված ժողովրդի ինքնագիտակցության վերականգնման ու նրան վրեժխնդրության մղելու հարթություն:

Դա է պատճառը, որ «միջին երևանցու» հոգեբանության վրա «բարերար ազդեցություն» ունեցան ոչ թե 1980-1990-ականների սահմանագծին մեր երկրում իրականացված սահմանափակ բարեփոխումները, այլ 1990-ականների վերջերից Հայաստանում ներդրված կառավարման ասիական եղանակները: Այսինքն՝ որքան էլ առաջին հայացքից տարօրինակ է, հենց «միակ տղամարդու» ու նրա հաջորդի մարմնավորած արևելյան մելիքաբեկական իշխանությունն էր հոգեհարազատ իր ճնշող մեծամասնությամբ ռայայի հոգեկերտվածքից չազատված «միջին երևանցու» համար: Մանավանդ որ արտաքուստ միայն եվրոպական տեսք ունեցող մեր մայրաքաղաքում 1990-ականների վերջերից սկսել էին վերականգնվել նման իշխանության **հին** էության **նոր** խորհրդանշաններն իրենց դրյակների (նախկինում՝ **քյոշքեր**), արտասահմանյան շքեղ մեքենաների (նախկինում՝ **արաբական ձիեր**), նրանցով երթևեկող կովազան հեղինակությունների (նախկինում՝ **քուրդ թոռուններ**) և վերջապես՝ բուրժուական ստատուս-խմբի դերը ձևախեղող աղա-տղանների (նախկինում՝ **թուրք աղաներ**) տեսքով<sup>8</sup>:

Արտաքուստ միայն տարօրինակ թվացող այս համեմատությունները գալիս են վկայելու, որ մեր մայրաքաղաքի բնակչության մեծամասնությունը չի սահմանազատվել արևելյան բռնապետությանը ներհատուկ «արժեքներից» և հոգեպես շարունակում է մնալ վերջինիս բնորոշ այն **տեսակային խմբերի** գերին, որոնք իրականում ֆիզիկապես են միայն պատկանում հայությանն

7 Ավելի մանրամասն տես «Վէմ»-ի ներկա համարում հրապարակվող «Հայոց ցեղասպանության 50-ամյակը Խորհրդային Հայաստանում» ուսումնասիրությունը:

8 Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում այս տիպական համեմատությունների հեղինակ **Կարեն Ռ. Երվանդյանին**, ով իր դեռևս անտիպ «Որտեղ ենք գտնվում. Հայաստանում, թե՛ Թուրքահայաստանում» աշխատության մեջ բազմաթիվ ընդհանրություններ է հայտնաբերել Ռուբենի հուշերում առարկայորեն պատկերված մեր տխուր անցյալի և ոչ պակաս տխուր ներկայի միջև: Խմբ.:

ու հայկական մշակույթին: Այդ խմբերը պահպանել են նաև «միջին երևանցուն» բնորոշ բառապաշարի արևելյան ենթաշերտը իրեն ներհատուկ «թուրքիզմների» համակարգով՝ **մայլա** (թաղամաս), **քյասա** (կտրուկ), **գիրիլ** (աղբ) և այլն, որոնց խորհրդային շրջանում գումարվել է «ռուսիզմների» զուտ երևանյան շերտը՝ **վարշե** (ընդհանրապես), **խառոշի** (լավ), **պոասպեկտ** (մայրուղի) և այլ բանալի-բառերով հանդերձ: Արդյունքում ստեղծվել է երևանի ռուս-թուրքական ժարգոնը, որը հաճախ պարսկաարաբական բառարմատներ ունեցող՝ խոսակցական **թուրքերենի** և եվրոպական փոխառություններով խճողված **ռուսերենի** խառնուրդ է: Այս յուրօրինակ «երևաներենում» հայերենը հիմնականում խաղում է օտար ընդօրինակումների «կապող օղակի» դեր, օրինակ՝ թուրքական «քյասան» բավականին մեծ հաջողությամբ շաղկապում է ռուսական «վարշե»-ի հետ: Իսկ ինչպես հայտնի է, «լեզուն կեցության տունն է», որը մտածողության ու գիտակցության միջոցով ձևավորում է մարդու ներաշխարհը<sup>9</sup>:

Հայկական մշակույթի խորքային էությանը հակասող երևանյան հակամշակույթը անկախության շրջանում կարող էր փոխվել մտավորականության և քաղաքական ուժերի բարերար ազդեցությամբ: Բայց մտավորականությունը՝ որպես սոցիալական շերտ, անկախության տարիներին հենց ինքը հայտնվեց քայքայման փաստի առջև: Իսկ ինչ մնում է քաղաքական ուժերին, սպա անցած քսանամյակում Երևանը նրանց համար դարձավ այն չուսումնասիրված **ճահիճը**, ուր ոտք դնելուց հետո արագորեն ներքաշվում ու կուլ են գնում:

Պատճառն ակնհայտ է. ձևախեղված միջավայրի կարգաբերման փոխարեն՝ նրան զարգացման որոշակի ուղղվածություն հաղորդելու փորձերը ի սկզբանե դատապարտված էին ձախողման: Ուստի Երևանի կիսագողական բառապաշարում «կուսակցություն» և «կուսակցականություն» եզրույթներն անգամ արագորեն փոխակերպվեցին դրանց գլուխ կանգնած անհատներին սոսկ որպես «լավ» կամ «վատ» տղաներ գնահատելու «թաղային մեթոդաբանության»: Մայրաքաղաքային ստատուս-խմբի գործառույթների ձևախեղման արդյունքում Երևանի յուրաքանչյուր թաղ աստիճանաբար ձևավորեց իր «կուսակցությունը»՝ տվյալ թաղի «ամենալավ» տղայի գլխավորությամբ, ինչն առարկայորեն դրսևորվում է մանավանդ գյուղական կենցաղ ունեցող թաղամասերում: Ուստի Մալաթիա-Սեբաստիայում՝ «լֆիկականների», Էրեբունիում՝ «թոխմախիմերականների», Ավանում՝ «նեմեցուրոյականների» թաղային «կուսակցությունները» ամուր կերպով շրջափակեցին հանրային դիսկուրսի ծավալման հնարավորությունները:

Այս ամենի արդյունքում՝ վերջին մի քանի համապետական ընտրություններում Երևանն իր քաղաքական մշակույթի զարգացման մակարդակով և դրա վկայությունը հանդիսացող ընտրողների գիտակից ակտիվությամբ զգալիորեն զիջեց ոչ միայն Հայաստանում առաջատար համարվող **Վանաձորին**, այլև երկրաշարժի ֆիզիկական ու հոգեմտավոր ավերածություններից աստիճանաբար ձերբազատվող **Գյումրիին**, չխոսելով արդեն վերջին նախագահական ընտրությունների հայտնությունը դարձած մանր քաղաքների (**Իջևան**, **Սևան**, **Կապան** և այլն) «քաղցած, բայց հպարտ» կեցվածքի մասին:

<sup>9</sup> Այդ մասին ավելի մանրամասն տես «ՎԷՄ»-ի ներկա համարում հրապարակվող՝ **Սիրանուշ Գ. Հովհաննիսյանի** «Տեքստի պատմական և մշակույթային արժեքը» և **Մարինտա Կ. Նիկողոսյանի** «Կեցության հիմնախնդիրը Մարտին Հայդեգերի ուսմունքում» հոդվածները:

Երկրում **առաջինը** լինելու կոչումն ունեցող մայրաքաղաքային հասարակության քայքայման իրողությունն ի ցույց դնելով Երևանի գլխին կախված՝ **վերջինը** դառնալու ստույգ վտանգը, առարկայորեն ապացուցում է, որ անկախ Հայաստանի մայրաքաղաքն այսօր քաղաքական, տնտեսական ու հոգեմտավոր կողպեքների մի համակարգ է, որի առանձին «փականները» բացելու փորձերը միայն ժամանակավոր արդյունք են տալիս, քանզի վերջիններս իրականում նախատեսված են հենց նման մասնակի ջանքերի շրջափակման համար: Դրանք հնարավոր է բացել միայն ողջ Երևանը որպես պետության և ազգի հետագա ընթացքը կասեցնող մի մեծ ու ծանր կողպեք դիտարկելու պարագայում, որն ունի ընդամենը մեկ, նույնպես մեծ ու ծանր բանալի: Այսինքն՝ որպես արգելքների ու հնարավորությունների մեկ ամբողջություն, որոնցից առաջինը մարմնավորում է իշխանության ու նրան հպատակվող «միջին երևանցու» արևելյան հոգեկերտվածքը, իսկ երկրորդը՝ վերջիններիս հակադրվող քաղաքաբնակի **քաղաքացի** դառնալու և **քաղաքակրթություն** ստեղծելու առաքելությունը:

Վերևում ասվածն առարկայորեն ապացուցում է, որ մեր մայրաքաղաքում ընթացիկ-քաղաքական լուծումներն ու դեղատոմսերը որևէ արդյունք չեն տալու առանց Երևանի ներսում տիրապետող հակամշակույթի դեմ պայքարի: Հայկական միջավայրում առանց ազգային ինքնագիտակցության վերելքի և ինքնության լիարժեք վերականգնման հնարավոր չէ հասնել նման արատների հաղթահարմանը: Վկան՝ հայ ազատամարտի կամ հայ հեղափոխության և նրա ծնունդ Հայաստանի առաջին Հանրապետության ուսանելի պատմությունն է<sup>10</sup>:

Ուրեմն՝ Երևանը կարող է ստանձնել Հայաստանի առաջադիմության շարժիչ ուժի՝ պատմությամբ իրեն վերապահված դերը, եթե նրանում ի հայտ գան քաղաքացիական կեցվածքների միջոցով մայրաքաղաքային նոր ստատուս-լամբի ձևավորման նպատակ ու միաժամանակ՝ համազգային տեսլական ունեցող **մտածողներ** ու **մարզարեններ** և նրանց գաղափարներով սնվող շարժումներ, որոնք ի վիճակի են իրականացնելու նախևառաջ՝ **արժեքային** կամ **մշակութային հեղափոխություն**:

Խմբ.

## EDITORIAL

### YEREVAN'S LOCKS AND KEYS

10 Ավելի մանրամասն տե՛ս «ՎԷՄ»-ի ներկա համարում հրապարակվող **Կարեն Պ. Հայրապետյանի** «Հատվածականության հիմնախնդիրը Հայաստանի առաջին հանրապետությունում» ուսումնասիրությունը: